

«Գրանցված է»  
ՀՀ արդարադատության  
նախարարության կողմից  
18 սեպտեմբերի 2010 թ.  
Պետական գրանցման թիվ 10210343

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

9 սեպտեմբերի 2010 թ.  
ք. Երևան

N 185-Ն

## Հ Ր Ա Մ Ա Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ  
ԿԱԴՐԵՐԻ ՌԵԶԵՐՎՈՒՄ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ ԿԱԴՐԵՐԻ ՌԵԶԵՐՎԻՑ ՀԱՆՑԵԼՈՒ ԿԱՐԳԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքի 51.16-րդ հոդվածի 4-րդ մասով.

### *Հրամայում եմ՝*

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության  
քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայության կադրերի  
ռեզերվում գրանցելու և կադրերի ռեզերվից հանելու կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող  
տասներորդ օրը:

**Գ. Դանիելյան**

Հավելված  
Հայաստանի Հանրապետության  
արդարադատության նախարարի  
2010 թվականի սեպտեմբերի 9-ի  
N 185-Ն հրամանի

**Կ Ա Ր Գ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ  
ԿԱԴՐԵՐԻ ՌԵԶԵՐՎՈՒՄ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ ԿԱԴՐԵՐԻ ՌԵԶԵՐՎԻՑ ՀԱՆՑԵԼՈՒ**

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության  
նախարարության քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ  
ծառայության կադրերի ռեզերվում (այսուհետ՝ կադրերի ռեզերվ) գրանցելու և կադրերի ռեզերվից  
հանելու ընթացակարգը:

2. Կադրերի ռեզերվը «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 51.16-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքերով զբաղեցրած պաշտոնից ազատված քաղաքացիական ծառայողների հանրույթ է:

3. Կադրերի ռեզերվում գրանցումը՝ կադրերի ռեզերվում գրանցելու և հանելու թերթիկի համապատասխան մասի լրացումն է՝ համաձայն ձև 1-ի:

Գրանցման թերթիկը պահվում է քաղաքացիական ծառայողի (այսուհետ՝ ծառայող) անձնական գործում:

Գրանցման թերթիկները հաշվառվում են այդ նպատակով պահվող և վարվող մատյանում:

Կադրերի ռեզերվում գրանցված ծառայողի (անձի) ցանկությամբ կարող է լրացվել և տրվել գրանցման թերթիկի օրինակ:

4. Կադրերի ռեզերվում գտնվելու ժամկետի սկիզբ է համարվում Օրենքի 51.16-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որևէ հիմքով զբաղեցրած պաշտոնից ազատվելուն հաջորդող օրը:

5. Կադրերի ռեզերվում գրանցումը կատարվում է Օրենքի 51.16-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որևէ հիմքով ծառայողին քաղաքացիական հատուկ ծառայությունում զբաղեցրած պաշտոնից ազատելու մասին համապատասխան հրամանի արձակման օրվանից հնգօրյա ժամկետում:

6. Կադրերի ռեզերվից հանելը՝ կադրերի ռեզերվում գրանցելու և հանելու թերթիկի համապատասխան մասի լրացումն է՝ համաձայն ձև 1-ի:

7. Կադրերի ռեզերվից քաղաքացիական ծառայողին հանելու հիմքերն են՝

1) անձնական դիմումը.

2) օրենքով սահմանված կարգով իր եկամուտների հայտարարագիրը չներկայացնելը.

3) քաղաքական, հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, քաղաքացիական, ինչպես նաև քաղաքացիական ծառայության պաշտոններում ընտրվելը կամ նշանակվելը.

4) սույն կարգի խախտմամբ կադրերի ռեզերվում գրանցվելը.

5) օրենքի 51.19-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումները չպահպանելը.

6) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելը.

7) օրինական ուժի մեջ մտած՝ նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը.

8) դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչվելը.

9) դատական կարգով քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից զրկվելը.

10) օրենքի 51.6-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված հիվանդություններից որևէ մեկով հիվանդանալը.

11) կադրերի ռեզերվում միանգամյա գտնվելու առավելագույն ժամկետը լրանալը.

12) քաղաքացիական ծառայողի 65 տարին լրանալը.

13) ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելը.

14) քաղաքացիական ծառայողի մահը.

15) օրենքով սահմանված այլ հիմքեր:

8. Կադրերի ռեզերվում գտնվող ծառայողին, հաշվի առնելով նրա մասնագիտական գիտելիքները ու թափուր հաստիքների առկայությունը, կադրերի ռեզերվում գտնվելու ընթացքում առաջարկվում են համապատասխան պաշտոններ:

9. Կադրերի ռեզերվում գտնվելու ժամկետում չեն հաշվարկվում ծառայողի ժամանակավոր անաշխատունակության, ամենամյա կամ չվճարվող արձակուրդում գտնվելու ժամանակահատվածները:

10. Մույն կարգի 7-րդ կետով սահմանված հիմքերից որևէ մեկի առաջացման պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում քրեակատարողական վարչության պետը արձակում է հրաման կադրերի ռեզերվից հանելու մասին:

11. Կադրերի ռեզերվում գրանցված ծառայողի վարձատրության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են օրենքով:

Ձև 1

**Քաղաքացիական հատուկ ծառայության  
կադրերի ռեզերվում գրանցելու և  
կադրերի ռեզերվից հանելու կարգի**

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՌԵԶԵՐՎՈՒՄ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ  
ՀԱՆԵԼՈՒ ԹԵՐԹԻԿ ԹԻՎ \_\_\_\_\_**

1. Ազգանունը, անունը, հայրանունը \_\_\_\_\_

2. Ծննդյան տարին, ամիսը, ամսաթիվը \_\_\_\_\_

3. Անձնագիրը \_\_\_\_\_  
(սերիան, համարը, ում կողմից է տրվել և տրման ամսաթիվը)

4. Զբաղեցրած վերջին քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնը \_\_\_\_\_

(պաշտոնի անվանումը)

5. Քաղաքացիական հատուկ ծառայության դասային աստիճանը \_\_\_\_\_

**ԿԱԴՐԵՐԻ ՌԵԶԵՐՎՈՒՄ ԳՐԱՆՑՈՒՄ**

Կադրերի ռեզերվում գրանցելու հիմքը \_\_\_\_\_

Կադրերի ռեզերվում գտնվելու ժամանակաշրջանի սկիզբը « \_\_\_\_ » \_\_\_\_\_ թ.

ՀՀ արդարադատության նախարարության

քրեակատարողական վարչության պետ՝ \_\_\_\_\_  
(ստորագրություն, անուն, ազգանուն)

« \_\_\_\_ » \_\_\_\_\_ թ.

Կնիքի տեղը

**ԿԱԴՐԵՐԻ ՌԵԶԵՐՎԻՑ ՀԱՆՈՒՄ**

Կադրերի ռեզերվում հանելու հիմքը \_\_\_\_\_

Կադրերի ռեզերվից հանվել է \_\_\_\_\_

ՀՀ արդարադատության նախարարության

քրեակատարողական վարչության պետ՝ \_\_\_\_\_  
(ստորագրություն, անուն, ազգանուն)

Կնիքի տեղը

«\_\_\_\_\_» \_\_\_\_\_ թ.